Հարցազրույց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանի հետ

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների հաջագումարի ձախօրեին Արմենպրեսի թղթակիցը Մոսկվայում հանդիպում ունեցավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Ս. Գ. Հարությունյանի հետ և խնդրեց պատասխանել հանրապետության բնակչությանը խիստ հուզող մի քանի հարցերի։

— Ընկեր Հարությունյան, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների հաջագումարն, անշուշտ, կքննարկի մեր հասարակության ամենացավոտ պրոբլեմները, կնշի հետագա վերափոխումների կոնկրետ ուղիները։ Ցանկալի կլիներ, որ Դուք, թեկուզև համառոտակի, շարադրեիք մեր դիրքորոշումը այն պրոցեսների առթիվ, որոնք այսօր տեղի են ունենում հանրապետությունում։

— Վերակառուցումը խորհրդային մարդկանց հույսն է, նրա հետ են կապված երկրի բոլոր ժողովուրդների ակնկալիքները։ Միևնույն ժամանակ ամբողջ երկրի համար ընդհանուր պրոբլեմների հետ մեկտեղ, վերակառուցումը յուրաքանչյուր հանրապետությունում, յուրաքանչյուր ռեգիոնում ի հայտ է բերում նաև նրանց համար առանձնահատուկ պրոբլեմներ։

Դրանք հատկապես այն պրոբլեմներն են, որոնք անհատի պաշտամունքի ու լճացման տարիներին միասնականացման նպատակով հատկապես հետևողականորեն ու խորը էին թաքցվում։ Ցավոք, տարբեր ռեգիոններում տեղի ունեցածի գնահատման նկատմամբ միասնականացված մոտեցման հակումն այսօր էլ է երբեմն սրում ընդհանուր իրավիճակը և այս իմաստով դառնում վերակառուցումն արգելակող գործոն։

Բնականաբար, վերակառուցումը դրսևորման որոշակի առանձնահատկություններ ունի նաև մեր հանրապետությունում։ Սոցիալ-տնտեսական պրոբլեմների տասնամյակներ շարունակ կուտակված ծանրագույն բեռը և մարդկանց սուր **անբավարար** վածությունը, պատմական ողբերգական ճակատագրի անամոթ ցավը և ազգային ինքնագիտակցության պոռթկումը, դեկտեմբերյան աննախադեպ երկրաշարժն ու տասնյակ հազարավոր մարդկանց խեղված ճակատագիրը խոր կնիք են դրել հանրապետության կյանքի վրա։

Ստեղծվել է ոչ հասարակ, ես կասեի՝ ծայրաստիճան արտակարգ իրավիճակ։ Մեր ժողովրդի գոյատևման և հետագա վերածնման շահերը պահանջում են ուժերի ու հնարավորությունների առավելագույն լարում, ազգային միասնության ու համախմբվածության տեղի ունեցող պրոցեսների նկատմամբ խելամիտ ու կշռադատված մոտեցում։ Այս ոչ դյուրին, արտակարգ պայմաններում երբեմն ձայներ են լսվում, թե վերակառուցումը հանրապետությունում ընդունում է ազգայնամետ բնույթ։

Միանգամայն բնական է, որ վերակառուցման ձևերը, դեմոկրատացումը, հրապարակայնությունն են նաև հանգեցրել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացմանը։ Բնական է նաև այն, որ նշված հասարակական պրոցեսներն ուղեկցվում են որոշակի հուզական ալիքներով։ Չէ որ մեր ժողովուրդը դարեր շարունակ կորցրած է եղել իր պետականությունը։ Ինքնապահպանման պայքարը դարձել է հայ ժողովրդի գոյության հիմքը։ Նա տեսել է մարդկության ընդհանուր պատմության ամենաողբերգական ոճրագործությունը՝ մասսայական ցեղասպանությունը, որը միևնույն հիմա դեռ իրավաբանորեն ճանաչված չէ համաշխարհային հանրության կողմից՝ քաղաքական կոնյունկտուրայի պատճառով։

Դա մի ժողովուրդ է, որի ճակատագրի վրա ուժեղ կնիք են թողել ազգային քաղաքականության մեջ թույլ տրված ստալինյան խեղաթյուրումները։ Ուստի սխալ է ու միամիտ մեզ մոտ տեղի ունեցող պրոցեսների էությունն ընկալել որպես հակավերակառուցողական շարժում, որպես ոտնձգություն դեմոկրատական վերափոխումների հիմքերի անկատմամբ։

— Եվ, այդուամենայնիվ, այսօրվա իրադրությունը չի կարելի գնահատել այլ կերպ, քան որպես ծայրաստիճան լարված և վերջին ժամանակներս խիստ սրվող...

— Հանրապետությունում իրադրության բարդացման պայթուցիչը դարձան ԼՂԻՄ-ում ծայր առած գործադուլներն ու ազգամիջյան հարաբերությունների սրումը։ Դրանք ընդգրկել են բնակչության բոլոր խավերը. վերսկսվել են բազմամարդ միտինգները, ցույցերը, նորից գործադուլի կոչեր են հնչում։

Հասարակության ուշադրության կենտրոնում նորից սուր հարցերի բարդ կծիկն է։ Ինչո՞ւ պետք է մեկ ժողովուրդը կիսված լինի միասնական պետության շրջանակներում։ Ինչպե՞ս կարող էր պատահել, որ տարիներ շարունակ Ադրբեջանի ղեկավարությունը ԼՂԻՄ-ում բացահայտորեն վարեր մշակութային մեկուսացման և հոգևոր ճնշման գիծ։

Այս հարցերին պատասխանելու համար հարկավոր է մի հայացք գցել տեղի ունեցող պրոցեսների էությանը։ ԼՂԻՄ-ի պրոբլեմը տարածքային վեճ չէ։ Դա, եթե ուզում եք, այն բարոյական ու քաղաքական անկյունաքարն է, որով որոշվում է վերակառուցման խորության ու ընդգրկման մեր այսօրվա ըմբռնումը։ Մենք ամբողջ ձայնով դատապարտել ենք ստալինյան կամության շատ վոլյունտարիստական և անգամ հանցավոր գործողությունները, որոնց պատճառով սոցիալիզմը ծանր ձևախեղումներ է կրել։ Մեր կարծիքով, ժամանակն է գործնականորեն հաշվի առնելու նաև այն փաստը, որ ազգային քաղաքականության մեջ ընդունված հակադեմոկրատական որոշումները անհատի պաշտամունքի հետևանքներ են։ Եվ եթե մենք իրոք ուզում ենք ընթանալ վերակառուցման խորացման ուղիով, ապա պետք է վերացնենք թույլ տրված պատմական ու քաղաքական անարդարությունը առանձին ազգերի ու ռեգիոնների նկատմամբ։

Ահա թե էլի ինչ կցանկանայի ընդգծել. անհավոր տարեթիվ աղետը Հայաստանը պատուհասեց Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի հետ կապված հույզերի ծայրաստիճան շիկացման պահին։ Եվ եթե անգամ այդպիսի ողբերգության ժամին հայ ժողովուրդը չմոռացավ այդ պրոբլեմը, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ խոր ու անամոթ ցավ է ամբարված նրա հոգում։

Լեռնային Ղարաբաղի պրոբլեմն այսօր դարձել է համազգային գաղափար։ Եվ եթե դրա լուծմանը մոտենանք նախկին մեթոդներով՝ պատճառահետևանքային կապերը շփոթելով, պիտակներ կպցնելով, հանգստության և խոհեմության բարձրագոչ կոչերով, մասսայական ինֆորմացիայի միջոցների կողմից թույլ տրվող կոշտ ճնշմամբ, ապա դա նշանակում է էլ ավելի բարդացնել ռեգիոնի իրավիճակը։

Մենք համոզված ենք, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծում կընգտնվի ազգամիջյան հարաբերությունների վերակառուցման ընթացակով ներկայումս կուսակցության բոնած կուրսի ընդհանուր տեսանկյունից։ Հարկավոր է որոնել, իհարկե, սահմանադրական հիման վրա, միջակա լուծումներ, որոնք արդեն այսօր կարողանային թուլացնել լարվածությունը հնքնավար մարզում և, ինչպես ասում են, նրա շուրջը։ Այսպիսի փուլնազմիկ որոշում դարձավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև սահմանելու մասին։

— Թվում էր, թե ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումից հետո ռեգիոնի իրադրությունը պետք է կարգավորվեր։ Իսկ ինչո՞ւ այսօր մենք հակառակն ենք տեսնում։

— Այս հարցին պատասխանելու համար հարկավոր է սկզբունքորեն, շատ ազնիվ կերպով վերլուծել այն, ինչ թաքնված է ԼՂԻՄ-ի այսօրվա լարվածության հետևում։

Մենք բացատրական մեծ աշխատանք ենք կատարել հանրապետությունում, որպեսզի աշխատավորությունը վըստահությամբ համակվի, որ հնքնավար մարզի կյանքը կըբարեփոխվի, կհարգվեն հայ բնակչության իրավունքներն ու արժանապատվությունը, որ, վերջապես, իրական նախադըրյալներ կապահովվեն ԼՂԻՄ-ի արագ զարգացման համար։ Պետք է խոստովանել, որ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը հանրապետությունում ընդհանուր առմամբ ընկալվեց որպես ժամանակին կատարված քայլ, ռեալ իրադրությամբ թելադրված փոխզիջում, որը հիմք է ստեղծում Լեռնային Ղարաբաղում կուտակված հարցերի լուծման համար։ Համենայն դեպս, հատուկ կառավարում սահմանելուց հետո բնակչության լայն խավերի շրջանում Լեռնային Ղարաբաղի թեման փոքր-ինչ կորցրեց իր սրությունը։ Եվ այսպես էր մինչև վերջին ժամանակներս, երբ մարզում նորից լարվածության օջախ առաջացավ։

Եկեք նայենք ճշմարտության աչքերին։ Ճիշտ քայլ էր մըտածված։ Սակայն պրակտիկայում շատ բան այլ կերպ ստացվեց։ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեին չըհաջողվեց հասնել այն պատասխանատու գործառնություններին, որ նրան էին վերապահված։ Եվ այստեղ բանն ամենևին էլ այն չէ, որ կոմիտեի անդամները չցանկացան կամ ի վիճակի չեղան աշխատել բարդ պայմաններում։ Պրոբլեմը, մեր կարծիքով, այն է, որ Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը ամրապնդված չէր նրա գործառնության պայմանների ու մեխանիզմների ժամանակին ընտեղծմամբ։ Կոմիտեն լիովին չդարձավ կենտրոնական, կամ ինչպես ընդունված է ասել շատ երկրներում՝ պրեզիդենտական կառավարման նոր ձև։ Այն, ցավոք, ժառանգեց մարզային հնքնավարության իրավական անկատարությունները։

Ընդամենը մի քանի ամիս անց պարզ դարձավ, որ կոմիտեն ոչ միայն չունի վարչական, տնտեսական կառավարման իր ստատուսին համապատասխանող մեխանիզմ, այլև անգամ ԼՂԻՄ-ի զարգացման համար հատկացված միջոցներն հնքնուրույն տնօրինելու իրավունք։ Դա նախ և առաջ բացատրվում է նրանով, որ հնքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու միջոցառումների մասին ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը ընդունվել էր մինչև ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի ընտեղծումը։ Իսկ դրա իրականացումը հիմնականում դըրված է Ադրբեջանական ԽՍՀ համապատասխան կազմակերպությունների վրա։ Մարզի հատուկ կառավարում, կենտրոնին նրա քաղաքական ու տնտեսական ենթակայություն սահմանելուց հետո ԼՂԻՄ-ի կառավարման ձևերն սկզբունքորեն չփոխվեցին։

Հատուկ կառավարման կոմիտեի գործունեության ընթացքում ռեալ տեղաշարժեր չեն եղել նաև Հայաստանի ու ԼՂԻՄ-ի տնտեսական, սոցիալական, մշակութային կապերում։ Հայաստանն Արցախի հետ պետք է ունենա բնական, ամենօրյա կապեր։ Առայժմ դրանց ճանապարհին խոչընդոտներ են հարուցվում, որը մշտական լարվածության աղբյուր կհանդիսանա։

Այսօր պետք են նաև մեր փոխհարաբերություններում հըրապարակայնության պարզորոշ սկզբունքները։ Մինչև հիմա մենք ԼՂԻՄ-ից հստակ, հավաստի ինֆորմացիա չենք ունեցել, ոչինչ չենք կարողացել մեր ժողովրդին ասել այն մասին, թե Լեռնային Ղարաբաղում արդեն ինչ է արված կուսակցության ու կառավարության ընդունած որոշումների իրականացման ուղղությամբ։ Դա խանգարել է իրադրության առողջացման, ամեն կարգի հերյուրանքների ու ասեկոսեների խափանման աշխատանքին։

— Ո՞րն է ստեղծված վիճակից դուրս գալու ճանապարհը։

— Այս մասին օրերս սկզբունքային, ուղղակի ասեմ՝ ոչ դյուրին խոսակցություն տեղի ունեցավ ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի ազգամիջյան հարաբերությունների հարցերի հանձնաժողովի նիստում։ Նըպատակահարմար գտնվեց ընդլայնել Հատուկ կառավարման կոմիտեի լիազորությունները, ելնելով մարզի իսկական հնքնուրույնության ապահովման շահերից։ Պետք է բացառվեն իշխանության տեղական մարմինների իրավունքների խախտումները՝ ում կողմից էլ որ թույլ տրվեն դրանք։

Գուցե ոչ բոլորն են այս բանը գիտակցում, բայց մենք գտնում ենք, որ հարկավոր է պաշտպանել յուրաքանչյուր քայլ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծման գործում։

Այստեղ ցանկալի կլիներ ասել. անհրաժեշտ է ամեն անգամ կոնկրետ մոտեցում ցուցաբերել ազգային պրոբլեմներին, կոնկրետ կերպով տարբերել ազգի շահերի պաշտպանությունը՝ ազգային եսասիրությունից, ազգի արժանապատվության պաշտպանությունը՝ ազգայնականությունից, ըզգաստության արտահայտման սոսկ հուզական ձևը՝ ծայրահեղականությունից։ Ազգային արժանապատվությունը վերացական հասկացություն չէ։ Դա միանգամայն կոնկրետ հասկացություն է որպես լեզու, պատմություն, մշակույթ։ Եվ նույնքան էլ կոնկրետ է դրսևորվում ժողովրդի վերաբերմունքը իր լեզվի, պատմության, մշակույթի նկատմամբ։

Մենք մեր ժողովրդի իղձերի ակտիվ դրսևորումը, ազգային հնքնագիտակցության՝ հենց վերակառուցման ծնած ներքագատումը հատկորեն սահմանազատում ենք առանձին անառողջ դրսևորումներից, որոնք ընդհանուր ոչինչ չունեն իսկական ժողովրդական շահերի հետ։

— Մենք գիտենք, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը աշխատանք է տանում ազգային հնքնագիտակցության, մեր պատմության առանձին իրադարձությունների անաչառ գնահատման նկատմամբ նոր մոտեցում մշակելու համար, նպատակ ունենալով դրանք զերծ պահել տարբեր շեղումներից ու խեղաթյուրումներից։ Ասացեք, խնդրեմ, այս հարցերը բարձրացվելո՞ւ են ժողովրդական դեպուտատների հաջագումարում։

— Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Հայաստանի հինավուրց ժողովուրդը դժվարին, դրամատիզմով լի ճակատագիր ունի։ Բայց տարօրինակն այն է, որ մեր պատմության ամենահաճավոր, ամենանացավոտ էջերն այսօր ինչ-որ չափով ստվերում են մնացել, պատշաճ գնահատական և ճանաչում չեն ստացել համաշխարհային հասարակայնության կողմից, ասենք նաև մեր երկրում։ Այստեղ ես առաջին հերթին նկատի ունեմ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական շարժումները, օսմանյան կայսրության կողմից մի ամբողջ ժողովուրդ մեթոդաբար ոչնչացնելու քաղաքականության վարումը, որի ահավոր ու հրեշավոր դրսևորումը դարձավ Արևմտյան Հայաստանի տարածքում 1915 թվականի Հայոց եղեռնը։

Բնական է, որ հայ ժողովրդի հոգում խոր հետք է թողել ոչ միայն եղեռնի ցավը, այլև այն ճանաչված չլինելու հանգամանքը։ Դուք գիտեք, որ հանրապետության Գերագույն խորհուրդը օրենք է ընդունել օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին և դիմել է ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ՝ խորհրդային պետության կողմից նրա պաշտոնական ճանաչման առաջարկությամբ։

Դա անհրաժեշտ է ոչ միայն արդեն կատարվածի ճանաչման, այլև հետագայում նման բաների կանխման համար։ Չէ որ Սումգայիթի ողբերգությունը, որը մի վերք էլ ավելացրեց 1915 թվականի ցեղասպանության մասին հայ ժողովրդի պատմական հիշողությանը, զայրույթի ալիք, բողոքի պայթյուն առաջ բերեց։ Մարդիկ սպասում և արդարացիորեն պահանջում էին տեղի ունեցածի հրապարակային, արդարացի գնահատական, սպասում էին շատ հարցերի պատասխաններ։ Այդ բանը տեղի չունեցավ, հին մտածողության իներցիան ավելի ուժեղ գըտնըվեց։

Ուստի և «Ինչու Սումգայիթը» հարցին որոշ հրապարակումներում այժմ երևում են պարզապես բարոյազուրկ պատուհասներ և բանը հասնում է այն արբապիղծ պնդմանը, թե բոլոր դժբախտություններն իբր հայ ժողովուրդն ինքն է իր գլխին սարքում։

Մեզ այսօր պետք է ճշմարտություն և միայն ճշմարտություն։ Պատմության անաչառ, արդարացի գնահատումը և մեզանում տեղի ունեցող պրոցեսների ճիշտ ըմբռնումը կարող են կարևոր դեր խաղալ հանրապետությունում իրադրության արագ կարգավորման, վերակառուցման պրոցեսի խորացման համար հասարակության բոլոր առողջ ուժերի համախմբման գործում։

— Ընկեր Հարությունյան, շատերին է հետաքրքրում Ձեր անձնական վերաբերմունքը մայիսի 28-ի նկատմամբ։

— Ես իմ կարծիքն այս հարցի առթիվ բազմիցս արտահայտել եմ։ Հայ ժողովուրդը, դարեր շարունակ զրկված լինելով իր պետականությունից, դրա վերականգնման հնարավորություն ստացավ ազգային-ազատագրական շարժման վերելքի, մեծ Հոկտեմբերի հաղթանակի ազդեցության շնորհիվ։

Այսօր, հեղափոխական վերակառուցման պայմաններում, վերացվում են շատ սպիտակ բծեր, վերականգնվում է պատմական ճշմարտությունը մեր երկրի ժողովուրդների ճակատագրի մասին։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1988 թվականի սեպտեմբերյան պլենումն ընդգծեց հայ ժողովրդի պատմության մի շարք իրադարձությունների վերահմաստավորման անհրաժեշտությունը։ Դրանցից մեկը 1918 թվականի մայիսի 28-ը Հայոց պետականության վերականգնման օր ճանաչելու հարցը է, նրա խորհրդանիշով՝ եռագույն դրոշակով հանդերձ։ Այս հարցի առթիվ մենք բազմաթիվ նամակներ ենք ստացել հանրապետության աշխատավորներից, գիտական և ուսումնական հաստատությունների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների կոլեկտիվներից, ստեղծագործական միություններից։

Ելնելով այն բանից, որ 1918 թվականի մայիսի 28-ը պատմական տարեթիվ է հայ ժողովրդի ճակատագրում, ազգային պետականության վերականգնման օրը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի գաղափարախոսական հանձնաժողովին հանձնարարված է, ներգրավելով գիտական լայն հասարակայնությանը, համակողմանիորեն ուսումնասիրել այդ հարցը և համապատասխան առաջարկություններ ներկայացնել Կենտկոմ։ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը մտցնելու համար։

Այդ տարեթվի առիթով կանցկացվի նաև Հայոց պետականության պատմության, 1918 թվականի մայիսին նրա վերականգնման քաղաքական պայմանների, խորհրդային ֆեդերացիայի համակարգում Հայկական սոցիալիստական պետականության զարգացման պրոբլեմներին նվիրված գիտական նստաշրջան։

— Եվ եթե կարելի է՝ վերջին հարցը. «Ղարաբաղ» կոմիտեի անդամների մասին, որոնք գտնվում են քննության տակ։

— Նրանց մեղադրանքներ են ներկայացված։ Բայց հաշվի առնելով մի շարք աշխատավորական կոլեկտիվների, երիտասարդության ներկայացուցիչների և բնակչության այլ խավերի ցանկությունները, ես դիմել եմ ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Յա. Սուխարևին, միջնորդելով մարդասիրական մոտեցում ցուցաբերել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ։ Կարծում եմ, որ մոտ օրերս ԽՍՀՄ դատախազությունը կարձագանքի մեր միջնորդությանը։